ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«16» 08 2022թ.
No ՀՂ-2043

«ԷԴ-ՍՊՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ

(հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, Շահումյանի 4 փ., 33)

Հարգելի՛ պարոն Ալթունյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորության շրջանակում, ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասով, խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն.

1. «Էդ-Սպո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ **Ընկերություն**) կողմից «սառեցնող տեխնիկա՝ ՋՈՎԱՑՆՈՂ ՋԵՂՁերով» ակցիայի (այսուհետ՝ **Ակցիա**) բոլոր պայմանների վերաբերյալ.

2. Ընկերության կողմից Ակցիայի մասին սպառողներին իրազեկելու բոլոր միջոցների վերաբերյալ՝ կցելով յուրաքանչյուր միջոցի օրինակը կամ նշելով հասանելիությունն ապահովող ինտերնետային հղումը.

3. Ընկերության կողմից Ակցիայի սկզբնաժամկետի դրությամբ «սառեցնող տեխնիկա»-ի ցանկը՝ համաձայն կից ներկայացվող ձևանմուշի:

Տեղեկացնում ենք, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն

սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

4. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

5. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «1» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝ Արմենուհի Թադևոսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (245)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 12 սեպտեմբերի 2022 թվական:

Ձևանմուշ

ՑԱՆԿ

«Էդ-Սպո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից իրականացվող «սառեցնող տեխնիկա՝ ԶՈՎԱՑՆՈՂ ԶԵՂՉերով» ակցիայի վերաբերյալ

Հ/Հ	Ապրանքի անվանում (Ակցիայի սկսելու օրվա դրությամբ առկա)	Ապրանքի կոդը	Ապրանքի քանակը	Ակցիայի մեկնարկին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի միջին գին	Զեղչի չափը (զեղչված չլինելու դեպքում սյունակը չլրացնել)	Զեղչի կիրառման արդյունքում ապրանքի գին

1 Հավելյալ տողերի անհրաժեշտության պարագայում հարկավոր է ավելացնել նոր տող:

2 Ձևանմուշը կարող եք ուղարկել նաև info@competition.am, armenuhi.tadevosyan@competition.am էլ. փոստի հասցեներին:

3 Ձևանմուշն անհրաժեշտ է ներկայացնել կից գրությամբ՝ ստորագրված՝ առկայության դեպքում կնքված, ձևանմուշների յուրաքանչյուր էջ ստորագրված և առկայության դեպքում վավերացված կազմակերպության կնիքով:

4 Ձևանմուշն անհրաժեշտ է ներկայացնել թղթային և էլեկտրոնային (Excel) եղանակներով:

5 Ձևանմուշի էլեկտրոնային տարբերակը ստանալու համար անհրաժեշտ է էլեկտրոնային նամակ ուղարկել info@competition.am, armenuhi.tadevosyan@competition.am հասցեներով:

Կատարող՝ Ա. Թադևոսյան, հեռ.060 830 840 (245):